


Մաթեմատիկա
4-րդ դասարան

*Մաթեմատիկան բոլոր գիտությունների թագուհին է:
 Կ. Գաուս*

1. Հաշվի՛ր, թե քանի եռանկյուն և քանի քառանկյուն կա հետևյալ պատկերում: (2 միավոր)



2. Թվանշաննե՛ր տեղադրիր, որ գործողությունը ճիշտ լինի: /1,5 միավոր/

ա)

				*	2	*			
			x						
				3	*	9			
			*	*	*	*			
	+								
	*	*	*	*					
	*	*	*	1	5	2			

բ) Թվանշանների փոխարեն տեղադրի՛ր համապատասխան տառերը: /0,5 միավոր/

1-ա 6-ն 3-հ 5-ը 2-թ

Ստացված բառը գրի՛ր. _____:

3. Գտի՛ր օրինաչափությունը և ավելացրո՛ւ ևս երեք անդամ: /1,5 միավոր /

4; 5; 7; 11; ---- ; ---- ; ---- :

4. Կա հինգ գատիկ: Երկու գատիկ ընկերներ են, եթե նրանց մեջքի վրայի կետերի քանակները տարբերվում են 1-ով: Յուրաքանչյուր գատիկ մեկ շնորհավորական հաղորդագրություն ուղարկեց իր ընկերներից յուրաքանչյուրին: Քանի՞ շնորհավորական հաղորդագրություն ուղարկվեց: /2,5 միավոր /




Պատ՝ _____ :

5. Թիվն ունի երկու թվանշան: Այդ թվանշանների արտադրյալը 36 է: Որքա՞ն է այդ թվանշանների գումարը: /1 միավոր /

Պատ՝ _____ :

6. 2, 3, 5, 6 և 7 թվերը գրում են նկարում բերված պատկերի վանդակներում այնպես, որ տողում գրված թվերի գումարը հավասար լինի սյունակում գրված թվերի գումարին: Ի՞նչ թիվ կարող է գրված լինել պատկերի կենտրոնական վանդակում: /1 միավոր /



7. Նարեկը գումարեց յոթ թիվ և ստացավ 2017: Այդ թվերից մեկը 302-ն է: Նա 302-ը փոխարինեց 203-ով և նորից գումարեց բոլոր թվերը: Ի՞նչ ստացավ Նարեկը արդյունքում: /2 միավոր /

Պատ՝ _____ :

8. Մատիտները վաճառվում են տուփերով, որոնք պարունակում են 5-ական, 10-ական և 25-ական մատիտ: Ամենաքիչը քանի՞ տուփ պետք է գնի Մանեն, եթե նա ուզում է գնել ճիշտ 65 մատիտ: /2 միավոր /

Պատ՝ _____ :

9. Գոռն ուներ 7 խնձոր և 2 բանան: Նա 2 խնձոր տվեց Անիին, որն իր հերթին մի քանի բանան տվեց Գոռին: Անին քանի՞ բանան տվեց Գոռին, եթե դրանից հետո Գոռն ուներ հավասար քանակով բանան և խնձոր: /1 միավոր /

Պատ՝ _____:

10. Կախարդական այգում աճում են Կախարդական ծառեր: Յուրաքանչյուր ծառի վրա կան 6 տանձ ու 3 խնձոր կամ 8 տանձ ու 4 խնձոր: Այգում կա 25 խնձոր: Քանի՞ տանձ կա այգում: /3 միավոր /




Պատ՝ _____:

11. Օգտվելով նկարներում բերված տվյալներից՝ որոշի՞ր մրգերից յուրաքանչյուրի արժեքը: /2 միավոր /

310 դրամ

270 դրամ

260 դրամ



Պատասխան՝  = _____ դրամ,  = _____ դրամ,  = _____ դրամ:

Ընդհանուր միավորը՝ _____

Ամիս, ամսաթիվ _____

Անուն, ազգանուն, հայրանուն _____

Դպրոց _____

Դասարան _____